ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 09 » ապրիլ 2024թ. No 2046 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության N01/1603-24 առ 08.04.2024թ. անվտանգության, արդյունավետության, և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական եզրակացությունները.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ`

1. Վերագրանցման ընթացակարգով գրանցել թվով 7 դեղ՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական

ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նաիրա Ռոմանովային՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցամատյանում լրամշակման կատարումը՝ ավելացնելով վերագրանցման մասին տվյալները:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի ապրիլի «09 » - ի N 2046 - Ա հրամանի

# Վերագրանցման ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Թիոտրիազոլին | թիազոտաթթվի մորֆոլինատ | լուծույթ ներարկման | 25մգ/մլ; (10/1x10/) ամպուլներ 2մլ բլիստերում | Հալիչֆարմ ԲԸ, 79024, ք. Լվով, Օպրիշկովսկայա փ., 6/8 | Ուկրաինա | Հալիչֆարմ ԲԸ, 79024, ք. Լվով, Օպրիշկովսկայա փ., 6/8 | Ուկրաինա | Դ | 22051 05.04.2024 |
| 2 | Թիոտրիազոլին | թիազոտաթթվի մորֆոլինատ | լուծույթ ներարկման | 25մգ/մլ; (10/1x10/) ամպուլներ 4մլ բլիստերում | Հալիչֆարմ ԲԸ, 79024, ք. Լվով, Օպրիշկովսկայա փ., 6/8 | Ուկրաինա | Հալիչֆարմ ԲԸ, 79024, ք. Լվով, Օպրիշկովսկայա փ., 6/8 | Ուկրաինա | Դ | 22052 05.04.2024 |
| 3 | Պովիդոն յոդ | պովիդոն յոդ | լուծույթ արտաքին կիրառման | 100մգ/մլ; 20մլ պլաստիկե շշիկ, 30մլ պլաստիկե շշիկ, 60մլ պլաստիկե շշիկ, 1000մլ պլաստիկե շշիկ | Ալֆա-Ֆարմ ՓԲԸ, Խրիմյան Հայրիկ 62, ք. Գյումրի | Հայաստանի Հանրապետություն | Ալֆա-Ֆարմ ՓԲԸ, ք. Երևան, Շիրակի 1/68 | Հայաստանի Հանրապետություն | ԱԴ | 22053 05.04.2024 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Սեվո-Անեստերան | սեվոֆլուրան | հեղուկ շնչառման | 100%; 250մլ ապակե շշիկ | Ռոմֆարմ Քոմպանի ՍՌԼ, փ. Դրումուլ Գարի Օտոպենի 52, ք. Օտոպենի, Իլֆով շրջան, 075100, շ. Ռոմֆարմ 3- բաց թողնման հսկող, Ռոմֆարմ Քոմպանի ՍՌԼ, Էրոիլոր փ., 1Ա, ք. Օտոպենի, Իլֆով շրջան, 075100, շ. Ռոմֆարմ 1, Ռումինիա- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի հսկող (մանրէաբանական), Ռոմֆարմ Քոմպանի ՍՌԼ, Էրոիլոր փ., 1Ա, ք. Օտոպենի, Իլֆով շրջան, 075100, շ. Ռոմֆարմ 2, Ռումինիա- երկրորդային փաթեթավորող, որակի հսկող (ֆիզիկոքիմիական) | Ռումինիա | Ռոմֆարմ Քոմպանի ՍՌԼ, Էրոիլոր փ., 1Ա, ք. Օտոպենի, Իլֆով շրջան, 075100 | Ռումինիա | Դ | 22054 05.04.2024 |
| 5 | Քափուրի յուղ | քափուր | լուծույթ արտաքին կիրառման | 100մգ/մլ; 30մլ ապակե շշիկ | ԷՍԿՈ-ՖԱՐՄ ՍՊԸ, Նոր Նորք 5-րդ զանգված, Միկոյան 13, Երևան 0079 | Հայաստանի Հանրապետություն | ԷՍԿՈ-ՖԱՐՄ ՍՊԸ, Նոր Նորք 5-րդ զանգված, Միկոյան 13, Երևան 0079 | Հայաստանի Հանրապետություն | ԱԴ | 22055 05.04.2024 |
| 6 | Զոլոֆտ | սերտրալին (սերտրալինի հիդրոքլորիդ) | դեղահատեր թաղանթապատ | 50մգ; (28/2x14/) բլիստերում | Պֆայզեր Մանուֆակչըրինգ Դոյչլանդ ԳմբՀ, Մուսվալդայլի 1, 79090 Ֆրայբուրգ Իմ Բրեիսգաու | Գերմանիա | Վիատրիս Սպեշիալտի ՍՊԸ, 3711 Քոլինս Ֆերի Ռոադ, Մորգանթաուն, ՎՎ 26505 | ԱՄՆ | Դ | 22056 05.04.2024 |
| 7 | Ֆլոգէնզիմ | բրոմելաին, տրիպսին, ռուտին | դեղահատեր աղելույծ | 450ՄԴՖ-Մ+1440ՄԴՖ-Մ(24 մկկատ)+100մգ; (40/2x20/) բլիստերում, (100/5x20/) բլիստերում, (200/10x20/) բլիստերում, (800) պլաստիկե տարայում | Մուկոս Էմուլզիոնս ԳմբՀ, Միրաուշտրասե 17, Դ-13509 Բեռլին | Գերմանիա | Մուկոս Ֆարմա ԳմբՀ և Քո.ԿԳ, Միրաուշտրասե 17, Դ-13509 Բեռլին | Գերմանիա | ԱԴ | 22057 05.04.2024 |